

«Վավերացնում են»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
19 հունվարի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 դեկտեմբերի 2005 թվականի N 2303-Ն

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՐՏԱԺԱՄՅԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ, ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Հաստատել քրեակատարողական ծառայողի արտաժամյա ծառայության համար վճարվող հավելավճարների չափը, հաշվարկման և վճարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2006 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2006 թ. հունվարի 12
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2005 թվականի
դեկտեմբերի 29-ի N 2303-Ն որոշման

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՐՏԱԺԱՄՅԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ, ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում են քրեակատարողական ծառայողի արտաժամյա ծառայության համար վճարվող հավելավճարների չափը, դրանց հաշվարկման և վճարման կարգն ու պայմանները:

2. Արտաժամյա ծառայության համար քրեակատարողական ծառայողին վճարվում է հավելավճար՝ արտաժամյա ծառայության յուրաքանչյուր մեկ ժամվա համար տվյալ ծառայողի դրամական բավարարման մեկ տոկոսի չափով, իսկ հանգստյան և տոն օրերին ծառայության

համար՝ ծառայության յուրաքանչյուր մեկ ժամվա համար տվյալ ծառայողի դրամական բավարարման 2 տոկոսի չափով:

3. Արտաժամյա, հանգստյան և տոն օրերին ծառայության համար սույն կարգի 2-րդ կետում նշված հավելավճարների փոխարեն քրեակատարողական ծառայողի ցանկությամբ տրամադրվում են համապատասխան թվով հանգստյան օրեր (ժամեր):

4. Քրեակատարողական ծառայողն արտաժամյա, հանգստյան և տոն օրերին ծառայության է ընդգրկվում, եթե՝

ա) կատարում է պետության պաշտպանության, ինչպես նաև տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների վերացման համար անհրաժեշտ աշխատանք:

բ) անհրաժեշտ է ավարտել սկսած աշխատանքը, որը պատահական կամ չնախատեսված խոչընդոտների պատճառով չէր կարող ավարտել նորմալ աշխատաժամանակի ընթացքում, և, եթե սկսած աշխատանքների դադարեցումը կարող է առաջացնել նյութերի փչացում, ոչնչացում կամ սարքավորումների անսարքություն:

գ) աշխատանքի չի ներկայացել հերթափոխային աշխատողը, ինչը կարող է հանգեցնել աշխատանքի անընդհատության խաթարման:

դ) քրեակատարողական հիմնարկում հայտարարվել է արտակարգ իրավիճակ:

ե) սահմանված կարգով հայտարարվել է տագնապ կամ անվտանգության ապահովման ուժեղացված ծառայություն:

5. Արտաժամյա ծառայության վերաբերյալ քրեակատարողական ծառայողի անմիջական ղեկավարի կողմից կազմվում է համապատասխան զեկուցագիր և ներկայացվում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետին, որն արձակում է համապատասխան հրաման քրեակատարողական ծառայողի արտաժամյա, հանգստյան կամ տոն օրերին ծառայության համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկներ և վճարումներ կատարելու վերաբերյալ:

6. Սույն կարգով սահմանված վճարումները կատարվում են ամիսը մեկ անգամ՝ քրեակատարողական ծառայողի արտաժամյա, հանգստյան և տոն օրերին ծառայության տվյալ ամսվան հաջորդող ամսվա ընթացքում:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան